2126.111525

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«27» 01 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ 0023-21**

*Ձեռնարկողը՝* *«Ճարտարապետական Արվեստանոց Աղեկյան» ՍՊԸ*
*Ք. Երևան, Պռոշյան 2/1*

*Գործունեությունը՝* ***Մոնթե Մելքոնյան փողոց 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
*քաղաք Երևան*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0023-21

«27» 01 2021թ.

***Մոնթե Մելքոնյան փողոց 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդցության նախնական գնահատման հայտ***

Ձեռնարկող՝ «Ճարտարապետական Արվեստանոց Աղեկյան»ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

**Ներածական մաս.** «Ճարտարապետական Արվեստանոց Աղեկյան» ՍՊԸ կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Մոնթե Մելքոնյան փողոց 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում (կառուցապատող՝ «ԽԱՉՀԱՐ» ՍՊԸ):

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2019թ. նոյեմբերի 14-ի N01/18-07/2-80907-1143 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.339197հա. մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

**Նկարագրական մաս.** Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Ծովակալ իսակով և Մոնթե Մելքոնյան տրանսպորտային հանգույցի հարևանությամբ, հանգուցի հյուսիս արևմտյան մասում՝ 650մ հեռավորության վրա: Կառուցապատվող տեղամասից 375 մ հեռավորության վրա կան բնակելի սեփական տներ, իսկ 100մ հեռավորության վրա այլ շինություններ և օբյեկտներ են: Տարածքը ազատ է կառուցապատումից և ենթակառուցվածքներից: Տարածքում բացակայում են ծառաթփուտային բուսականությունը տեղ-տեղ հանդիպում է հողային ծածկույթ:

Համաձայն նախնական գնահատման հայտի կառուցվելու է բազմաֆունկցիոնալ համալիր, ինչպես նաև համալիրը սպասարկող, մոտեցնող ճանապարհ: Կառուցապատվող տարածքին մոտեցումը կապահովվի առկա ճանապարհով, որն անցնում է հողամասի անմիջապես հարևանությամբ: Կից տարածքներով անցնում են գործող ինժեներական ենթակառուցվածքները:

Կառուցապատվող հողատարածքն ունի մեծ թեքություն, ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ նախատեսված է նկուղային և կիսանկուղային հարկեր: Կառույցը հողամասի ստորին հատակագծային նիշից նախագծվել է մինչև 22 հարկ, 18-րդ հարկից հետո նահանջով: Բնակելի հարկերի բարձրությունը հարկից հարկ ընդունվել է 3.30մ:

Նախագծվող տարածքն իրենից ներկայացնում է Մոնթե Մելքոնյան փողոցից աճող ռելիեֆ, որի բացարձակ նիշը փողոցին կից հատվածում 969-970մ է, իսկ ռելիեֆի բարձր հատվածում կազմում է 983.80մ:

Համաձայն գնահատման հայտի՝ ռելիեֆի առանձնահատկությունով պայմանավորված, բարձրահարկ շենքը տեղադրվելու է հնարավորինս հետ (35մ) փողոցին զուգահեռ: Այդ կոմպոզիցիայից ելնելով տարածքը բաժանվել է երկու հատվածների՝ բակային տարածք և հետ ընկած բնակելի շենք: Բակային տարածքում նախատեսված է ունիվերսալ հրապարակ՝ թենիս, բասկետբոլ, մինի ֆուտբոլ և այլն: Բակային տարածքը գտնվելով շենքի և փողոցի միջև հնարավորություն է ստեղծում բնակարանները պաշտպանել աղմուկից:

Նախատեսվող բնակելի համալիրի կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 2868,3մ², ներառյալ՝ կառուցապատման ստորգետնյա ծավալի մակերեսը՝ 1893մ² և ասֆալտապատ ու սալիկապատ հատվածների մակերեսը՝ 885,3մ²: Բակային տարածքի կանաչապատ մակերեսը կազմում է 1476քմ, որը կազմում է 43,5%: Հարկայնությունն ընդունված է մինչև 22 հարկ: Համալիրի կառուցապատման ծավալատարածական հորինվածքը նախատեսվել է ներդաշնակ տարածքի լանդշաֆտային առանձնահատկություններին համապատասխան:

Տեխնիկատնտեսական ցուցանիշները հետևյալն են.

- հողամասի մակերես - 3391,97 մ²,
- կառուցապատման մակերես - 2868,3մ², որից ասֆալտապատ և սալիկապատ հատվածները՝ 885,3մ²,
- կանաչապատ մակերես - 1476մ²,
- ընդհանուր շինարարական մակերես – 34545,09մ²,
- բնակարանների քանակ - 147հատ,

ՀՀ ԲՆՕՏՍՈՒ ՍՈՏԱԿԱՅՈՒՆ ՎՆԱՍԱԶԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ РА ГЕОЛОГИЧЕСКОЕ АГЕНТСТВО
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- ստորգետնյա ավտոկայանատեղի - 4 հարկ՝ 153 հատ ավտոմեքենայի համար,
- բնակելի ընդհանուր մակերես - 17 հարկ՝ 15983,4մ²,
- հասարակական մակերեսը՝ 2870,5մ²,
- կառուցապատման տոկոս, ներառյալ ասֆալտապատ և սալիկապատ հատվածներ –շուրջ 56%:

Տարածքն ազատ է կառույցներից և շինություններից: Շենքերի առաջին հարկերը նախատեսված են հասարակական նշանակության նպատակների համար:

Մոնթե Մելքոնյան փողոցի նիշից 5 հարկ բարձրությամբ, որին համապատասխանում է 0.00 նիշը, գտնվում է առաջին բնակելի հարկը: Բնակելի հատվածը նախատեսված է երկու շքամուտքով, յուրաքանչյուրում նախատեսված է 1 աստիճանավանդակ և 2 վերելակ: Տանիքը հարթ է՝ կազմակերպված ներքին ջրահեռացումով:

Ավտոկայանատեղին նախատեսված է ստորգետնյա 5 հարկերում, երկու առանձնացված մուտք և ելքերով, համապատասխանաբար -9.90 և -16.50 նիշերից: Ավտոկայանատեղերի հարկերում նախատեսված են ծխահեռացման, օդափոխման և հրդեհաշիջման սպինկլերային համակարգեր:

-23.10 նիշում նախատեսված է ջրամբար, մոտ 260 մ/խոր. ջրի ծավալով, որը նախատեսված է խմելու և հրդեհաշիջման համար: -1 և -2 հարկերում, որոնք համապատասխանում են -3.30 և -6.60 նիշերին նախատեսվում են գրասենյակային տարածքներ:

Բնակարանների շքամուտքերը նախատեսված է ռելիեֆի բարձր հատվածից, որի մոտեցումն իրականացվելու է Մոնթե Մելքոնյան փողոցից սկիզբ առնող նախագծային փողոցից, որը կապվում է Կիլիկիա թաղամասի հետ:

Բնակելի մասնաշենքը գազաֆիկացվելու է: Շենքի բնակարանների ջեռուցումը և տաք ջրի մատակարարումն իրականացվելու է անհատական եղանակով: Կաթսայատուն չի նախատեսվում:

Բնակելի շենքի արտաքին ինժեներական ցանցերի համար մշակվելու են վերջնական նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում/ նշված ծառայությունները մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրած տեխնիկական պայմանների համաձայն:

ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի համաձայն հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, բնակելի շենքերում ձեռնարկվելու են համապատասխան միջոցառումներ:

Նախնական գնահատման հայտի համաձայն շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ էքսկավատորներ, ինքնաթափ ավտոմեքենաներ, ավտո և աշտարակային կռունկներ, բետոնախառնիչ ավտոմեքենաներ և այլն: Շինարարական հրապարակի մակերեսը կազմելու է 500մ², որտեղ պահեստավորվելու են շինարարության համար անհրաժեշտ նյութերը, կայանվելու են շինարարության համար

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

նախատեսվող համապատասխան շինտեխնիկան, ժամանակավոր շինությունները և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (65 մարդ), աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը կազմում է 983.4 մ$^3$/շին.ժամ, միջին օրեկան 1.49մ$^3$: 200մ$^2$ ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 144մ$^3$/շին.ժամ: Փոշենստեցման համար ջուրը բերվելու է ջրատար մեքենաներով: Ոռոգման ջրապահանջը կկազմի 734.4 մ$^3$/տարի, միջին օրականը՝ 6.12 մ$^3$/օր:

Շինարարությունն իրականացնող անձնակազմն օգտվելու է ժամանակավոր տնակներից: Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են քաղաքային ցանցերին միանալուց հետո: Այդ միացումները կատարվելու են առաջնահերթ:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքների ընթացքում աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները՝ տարածքից: Հնարավոր կեղտաջրերի առաջացման դեպքում հրապարակում պահվելու է կեղտաջրերի հեռացման համար նախատեսված տարա, կամ բիոզուգարան, որտեղ կեղտաջրերի զանգվածի նստեցումից հետո, նստվածքը հնարավոր կլինի շինաղբի հետ հեռացնել աղբավայր, իսկ պարզված ջուրը՝ հնարավոր կլինի օգտագործել ջրցանման նպատակով կամ շինարարական այլ աշխատանքներում:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- շինարարական աշխատանքնրի համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն բիոզուգարանների

տեղադրմամբ, իսկ խմելու-կենցաղային նպատակների համար ջուրը կվերցվի տարածքում գոյություն ունեցող Մոնթե Մելքոնյան փողոցի հարևանությամբ առկա ջրամատակարարման ցանցից: Շինարարության ընթացքում առաջացող կենցաղային կեղտաջրերը կմիացվեն տարածքում գոյություն ունեցող կենտրոնին պատկանող ջրահեռացման համակարգին: Շինարարությունն իրականացնող անձնակազմն օգտվելու է ժամանակավոր տնակներից:

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 14.500մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 3500մ³ կօգտագործվի հետլիցքի համար, իսկ գրունտի ավելցուկային՝ 11.000մ³ ծավալը կտեղափոխվի արտոնագրված աղբավայր՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված, կամ կրկնակի կօգտագործվի:

Շին աշխատանքների ընթացքում առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ և փայտանյութ) կտեսակավորվեն և կպահվեն հրապարակում նախատեսված վայրերում՝ շինարարի կողմից հետագա օգտագործման նպատակով:

Աշխատանքների ընթացքում քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման իրավիճակում նախատեսվում է նշված նյութերը պահել հատուկ անթափանց և փակ տարաներում, որոնք հետագայում որպես երկրորդային նյութ կվերաօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում:

Շինարարական աշխատանքերի ընթացքում կառաջանա կենցաղային աղբ՝ օրական 10կգ: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբավայր՝ Երևան քաղաքը սպասարկող օպերատորի կողմից:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն: Կանաչապատ մակերեսը կազմում է 1476մ²: Կառուցվելու է այգի, որը կծառայի հանգստի և ժամանցի համար: Կանաչապատման համար նախատեսվում է օգտագործել պահեստավորված 200խմ բուսահողը, ինչպես նաև՝ լրացուցիչ 500խմ ծավալով բերված բուսահող: Բերրի հողի հզորությունը /շերտը/, որը կազմում է 5 – 10 սմ, հանդիպում է տեղ-տեղ: Բուսահողի բերումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար համաձայն դենդրոնախագծի, օգտագործվելու է թխկի կարմիր – 2 հատ, սովորական եղևնի – 7 հատ, գնդաձև իլենի – 9 հատ, լացող ուռենի – 5 հատ, կատալպա – 6 հատ, հուդայածառ – 6 հատ, սյունաձև թույա – 6 հատ, փռվող գիհի – 5 հատ, ձիակասկ – 5 հատ, դրախտածառ – 8 հատ, սակուռա – 1 հատ, ասպիրակ – 13 հատ, բարբարիս – 12 հատ, սամշիտ – 120գծմ, կուսախաղող – 40 մ²

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

սիզամարգ – 1280 մ² և թզուկ վարդեր - մ²: Այս տեսակները հարմար են Երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին:

Ոռոգումն իրականացվելու է կառուցվող ոռոգման ցանցի միջոցով, որը կմիանա Մոնթե Մելքոնյան փողոցի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցին: Ամբողջ հողամասը կունենա ոռոգման ավտոմատ համակարգ: Նախագծված ոռոգման ցանցը, որը կունենա 200 մ երկարություն, կմիանա տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման համակարգին՝ կնքվելիք պայմանագրին համաձայն:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում օրական 2-3 անգամ,
- աղմկահարույց աշխատանքների իրականացում՝ օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում՝ ապահովելով դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործումը,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տեսակավորում,
- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի և արտակարգ իրավիճակների անվտանգության նորմերի ու կանոնների պահպանում և այլն:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բնապահպանական միջոցառումների համար, ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվում է հատկացնել 300 հազ. դրամ:

**Պատճառաբանական եզրահանգումներ.** նախնական հայտի համաձայն նախատեսվող արտադրական նշանակության շինությունների վերակառուցումը, պահեստային շինությունները և պարիսպը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և պաշտպանության նախարարությունները, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

## Փորձաքննական պահանջներ

- Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները:
- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական,

գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:»:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և պահանջները:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ճարտարապետական Արվեստանոց Աղեկյան» ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Մոնթե Մելքոնյան փողոց 16 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Յու. Մատինյան